

ԿՐՈՆԱ—ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

«ԵՍ ԵԿԻ ԶԻ ԶԿԵԱՆՆ ՈՒՆԻՑԻՆ ԵՒ ԱՌԱՒԵԼ ԵՒՍ ՈՒՆԻՑԻՆ» (ՅՈՎՀ. Ժ. 10)

(Քարոզ՝ խօսուած Մայր տաճարում, 10 ապրիլի 1994 թ.)

Անցեալ կիրակի, Ս. Զատիկի առաւօտուն, երբ նայեցայ պատուհանէն դէպի մայրավանքի պարտէզը, բացայայտ էր որ գարուն է ամէն կողմ. երկինքը կապոյտ, ծառերու ճիւղերուն վրայ մանր տերևներ, վարդենիներու ոստերուն վրայ՝ մանր կոկոններ, թռչուններու ճռվողիւն, բնութեան զարթնում, նոր կեանք: Տարուան այն եղանակն էր, երբ ներքին անհասկնալի մղումով մը, ձմերուան թմբիրէն կ'արթննայ ամէն տերև և կը սկսի ծաղիկներ նուիրել արևին: Շարժում է ամէն էակի մէջ, շարժում դէպի կեանք և առաւել կեանք:

Հարց տուի ինքզինքիս թէ ինչպէ՞ս կարելի է բացատրել բնութեան այս երևոյթը: երբին ի՞նչ ոյժ է որ շարժման մէջ կը դնէ ամէն կեանք: Ուրկէ՞ կանոնաւորութիւնը, որով եղանակները կը յաջորդեն իրարու, ցերէկը գիշերին, գարունը ձմեռին, տարիները իրարու, ինչպիսի՞ կարգադրութիւն է որ երկնակամարի աստղերը կը կազմեն տիեզերքի ամբողջութիւն մը, իր օրէնքներով, կանոնաւորուած իր շարժումներով, կարծես նպատակի մը ձգտող իր ներդաշնակութեամբ:

Ներքին աքանչացումի մը մէջէն բարձրացաւ մտածողութիւնս արարածէն դէպի արարիչ և նոր իմաստով մը փայլեցաւ Յովհաննէս Աւետարանիչի խօսքերը.

Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ Աստուած և Աստուած էր բանն... Ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղևն:

Բնականօրէն մտածեցի պարզութեամբ մը որ կը վանէր ամէն կասկած թէ կանոնաւորուած տիեզերքի մը գոյութիւնը չի՛ կրնար պատահական ըլլալ, կեանքի ժայթքումը այդ տիեզերքին մէջ կարելի չէ՛ բացատրել պատահականութեամբ, տարրերու իրաքանչիւրին տեղը և դերը տիեզերքի համա-

լիրին մէջ չէ՛ կարելի բացատրել պատահականութեամբ, ոչ ալ իմ և նմաններուս մտածելու և աքանչանալու կարողութիւնը կարելի է բացատրել ինչ որ արկածով:

Ամէն գոյութիւն սկիզբ մը ունեցած պիտի ըլլայ, ամէն օրէնք, որով կը շարժի տիեզերքը՝ օրէնսդիր մը, ամէն ժամանակաւոր կեանք՝ անժամանակ աղբիւր մը:

Եւ զարմացայ թէ ինչպէս կան մարդիկ, և մեծամասնութիւն են անոնք, որոնց աչքերը չե՛ն նայիր տիեզերքի աքանչելիքներուն և չեն հիանար ու փնտռէր արարիչը երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: Այդպիսիները, տարուած իրենց առօրեայով, չե՛ն նայիր իրենց շուրջը և չե՛ն կրնար գիտակցիլ թէ իրենք մասն են աստուածային ստեղծագործութեան:

Տիեզերքին հարց տուող հոգիներն են, որոնք կրնան գտնել աստուածգիտութեան տանող ճանապարհը: Տիեզերքի անհունութեան և կեանքի խորհուրդին աքանչացողներն են միայն որոնց հոգիներուն մէջ կը ծագի իսկական գիտութեան լոյսը և կ՚ըմբռնեն թէ

Նովաւ կեանք էր և կեանքն էր լոյս մարդկան:

Ինչպէս կը ծլին ու կը ծաղկին բոյսերը և ծառերը, նոյնպէս, յարուցեալ Յիսուսին նայող աչքերուն առջև կը բացուին նոր երազներ, նոր տեսիլքներ, նոր հեռանկարներ: Մտաւոր և իմացական կեանքի ճիւղին վրայ՝ յարութեան ծաղիկներ կը ծաղկին՝ աստուածգիտութեան, յոյսի, սիրոյ, կը փայլին լուսաւոր կեանքի մը ճառագայթները և ան կը զգայ, կը գիտակցի թէ ինք մաս կը կազմէ ամբողջ տիեզերքի համալիրին, այն համալիրին որ Աստուծոյ փառքը կ՚երգէ, ինչպէս ըսուած է հազարաւոր տարիներ առաջ.

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ:

Ան որ գիտէ կարդալ Աստուծոյ փառքը տիեզերքի աքանչելիքներուն մէջ, այդ մարդու հոգին կը բացուի Աստուածային լոյսին և կը զարգանայ անոր մէջ մտերիմ կապ մը՝ որդիի և հօր, կապ մը Աստուծոյ հետ, հարազատութեան կապ մը:

Այս է նոր կեանքը, լուսաւոր կեանքը՝ աքանչացումէն ծնած գիտակցութիւն մը, թէ ինչպէս ամէն տեղ է Արարիչն Աստուած, այնպէս է նաեւ Ան՝ մեր սիրտին մէջ, ինչպէս ըսած է Յիսուս իր աշակերտներուն.

Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջն իսկ է:

Ես եկի զի զկեանս ունիցեք և առաւել ևս ունիցիք: Առաւել կեանք, հոգեկան նոր կեանք, յարութեան կեանք տալու համար եկաւ ինքն իսկ Աստուած՝ Յիսուս Քրիստոս, մարմնացաւ և մարդացաւ, չարչարուեցաւ, խաչուեցաւ և թաղուեցաւ, որպէսզի իր յարութեամբ մեզի պարգևէ կեանք մը, որ վերջ պիտի չունենայ:

Յարութեան կեանքն է առաւել կեանքը, կեանք մը առողջ հոգիի, որուն հաղորդակից կը դառնանք, երբ ներս կը մտնենք եկեղեցիի կեանքէն ներս, մաս կը կազմենք Յիսուսի մարմինին և փրկութեան ճամփով կ՚ընթանանք դէպի յարութեան լոյսը:

Եկեղեցիին կեանքը կը սկսի աւազանի ջուրէն, ուր կը սրբուի մեր հո-

գին, ուր Յիսուսի հետ կը թաղենք մեղքի կեանքը, որպէսզի անոր հետ յարութիւն առնենք նոր կեանքով:

Եկեղեցիին կեանքը կը զարգանայ և կ'արտայայտուի աղօթքով, որ փառաբանութիւնն է Աստուծոյ, մեր շնորհակալութեան խօսքն է կեանք պարգևողին:

Եկեղեցիին կեանքը սիրոյ կեանքն է Աստուծոյ և նմանին հանդէպ՝ ծնած գիտակցութենէն, թէ բոլորս ալ զաւակներն ենք Աստուծոյ և հետևաբար՝ եղբայրներ ենք:

Եկեղեցիին կեանքը կեանքն է այդ մեծ եղբայրութեան, որ կ'արտայայտուի երբ զիրար կ'ողջունենք, աւետելով Քրիստոսի յայտնութիւնը մեր մէջ:

Եկեղեցիին կեանքը հաղորդութեան կեանքն է, երբ կը խոստովանինք մեր մեղքերը, կը պարպուինք մեղքի աղտէն և, ընդունելով հացն ու գինին, կը լեցուինք աստուածային ներկայութեամբ:

Եկեղեցին յաւիտենական կեանքն է, որ կը սկսի այս աշխարհէն, Աստուծոյ արքայութիւնն է՝ երկրի վրայ:

Եկեղեցին բաց այն սեղանն է, որմէ ճաշակողը այլևս չանօթանար:

Եկեղեցին յաւիտենական ջուրն է, որմէ խմողը չի ծարաւիր յաւիտեան:

Եկեղեցին սրբութեան վայրն է, ուր յաւիտենապէս կ'ապրին մեզի հետ Սուրբերն ու Նահատակները:

Եկեղեցին ուխտավայրն է, ուր ազգերը կը կապեն իրենց ճակատագիրն Աստուծոյ հետ և իրենց պատմութիւնը՝ խաչի խորհուրդին:

Եկեղեցին աթոռն է Աստուծոյ, որուն առջև ուխտի կուգան երիտասարդ զոյգերը՝ կապուելու իրարու՝ Սուրբ Պսակի անքակտելի խորհուրդով:

Եկեղեցին հաւաքավայրն է Ազգին, ներշնչարանը անոր որդիներուն, անուցանողը ազգային սիրոյ և եղբայրութեան անսպառ շունչով:

Հայ Եկեղեցին, յատկապէս, հաւատքով և միութեան ոգիով ամրացնողն է մեզ մեր հայրենի հողին վրայ:

Հայ Եկեղեցին ուղեցոյցն է մեր պատմութեան, հաւատարմութեան և նուիրումի հրաւէր մը, որ տանք ձեռք ձեռքի և պաշտպանենք մեր հողն ու ընտանիքը, մեր տունն ու վանքը, մեր դպրոցն ու մշակոյթը, մեր հոգին, հայու անմար հոգին:

Այսօր, ոնէ ժամանակէ աւելի, երբ մեր ժողովուրդը կը քալէ պետականութիւն ստեղծելու դժուար ճանապարհէն, մեր եկեղեցին դրօշն է իմաստութեան և խոհեմութեան, համբերութեան և արիութեան, իրար օգնութեան և խտացումի, չարին դէմ պայքարելու և բարիին հետ զինակցելու:

Հաւատացեալ ժողովուրդ Հայոց,

դուք, որ եկած էք Սուրբ Էջմիածին և կեցած Իջման Սուրբ Սեղանին առջև, կը վառէք մոմը և խունկի անուշահոտութեան հետ կը բարձրացնէք ձեր ջերմ, այրող աղօթքն առ Աստուած, ուխտեցէք ձեր կեանքը ընել նոր կիրակի մը, յարութեան կիրակի մը, ուխտեցէք հաւատարիմ մնալ ձեր ազգային աւանդութիւններուն և ձեր հայրերու հաւատքին, ուխտեցէք լսել ձեր մեծ հովուապետին և լուսաւորիչ հայրապետին խօսքը, որ խօսքն է մեր Եկեղեցիի մեծ Սուրբերուն, և ձեր մէջ պիտի գտնէք ոյժ, աստուածային զօրութիւն և հոգիի խաղաղութիւն, որով պիտի կերտէք վաղուան Հայաստանը, վաղուան եկեղեցին, վաղուան ձեր փառքը, կամօք և օրհնութեամբ Աստուծոյ, որուն վայել է փառք, պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ